Նորայր Պողոսեան, *Հայ Բառարանագրութեան Պատմութեան Դրուագներ*, Պրակ Ա., Երեւան, Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Հրատ., 2016, 231 էջ:

«*Հայ բառարանագրութիւնն ու դրան ուղեկից բառարանագիտութիւնը դեռեւս չեն սպառել անելիքները*»՝ այդպէս է 2016ին տպագրած իր մենագրութիւնն սկսում ԵՊՀ դոցենտ, Էջմիածնի Գէորգեան Ճեմարանի դասախօս Նորայր Պողոսեանը: Գիրքը վերնագրուած է *Հայ Բառարանագրութեան Պատմութեան Դրուագներ*, որ, դատելով խորագրի «Պրակ Ա.» նշումից, յետագայում շարունակական է լինելու[1]:

Հեղինակի ասելով՝ նորովի քննելու կարիք ունեն յատկապէս ձեռագիր մատեաններում պահպանուող եւ ուշ միջնադարում ստեղծուած բառարանները, որոնք շատ յայտնի չեն բանասիրութեանը՝ քիչ ընդօրինակուած լինելու պատճառով: Նման միքանի բառարանների մասին էլ խօսում է Պողոսեանը, որոնց պայմանական անուանումները յաճախ տուել է ինքը՝ «Նահապետ Ծաղկողի Բառարան», «Ստեփանոս Վրդ. Լեհացու 'Բանք Իմաստասիրականք' Փիլիսոփայական Բառարան», «Բառարան Բժշկական», «Թուրքերէն-Հայերէն Յանգաւոր Բառարան», «Ի Վերայ Այբուբէնից Անուանք Քաղաքաց» աշխարհագրական բառարան եւն.:

Յիրաւի փառահեղ աւանդոյթներ ունի հայ բառանագրութիւնը թէ՛ միջնադարում, թէ՛ մեր ժամանակներում: Բաւական է յիշել Մխիթար Սեբաստացու *Բառգիրք Հայկազեան*ը (Հտր. Ա.-Բ., 1749-69), Գաբրիէլ Աւետիքեան-Խաչատուր Սիւրմէլեան-Մկրտիչ Աւգերեանի *Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի*ն (Հտր. Ա.-Բ., 1836-1837), Ստեփաննոս Մալխասեանցի *Հայերէն Բացատրական Բառարան*ը (Հտր. Ա.-Դ., 1944-45) եւն.: Իսկ մինչ այդ, ողջ միջնադարում ստեղծուել են բազմազան բառացանկեր, մատենակից, մասնագիտական (բժշկական, աստուածաբանական, քերականական եւ այլ) տիպի բառարաններ, որ հայ գրաւոր մշակոյթի մի կարեւոր մասն են կազմում, առանց որոնց անհնար է պատկերացնել թէ՛ հայ բառարանագրութիւնը, թէ՛ հայ ձեռագրագիտութիւնն ընդհանրապէս:

Պէտք է ասել, որ վերջին տարիներին ստեղծուել են հայ միջնադարեան բառանագրութեան մասին միքանի այլ աշխատութիւններ, ինչպէս օրինակ՝ Վազգէն Համբարձումեանի երկհատորեակը[2], որ բնոյթով որոշակիօրէն նման է Պողոսեանի գրքին, եւ որը ներկայացնում է հայութեան ոչ-շատ յայտնի միքանի բառարաններ, այդ թւում՝ Արիստակէս Համադանեցու *Վանկաբառարան*ը (1699), *Հայ-Լատիներէն Բառարան-Տերմինարան*ը (1756), Օտունի *Հայերէն-Լատիներէն Բառացանկ*ը (Թ. դարավերջ-Ժ. դարասկիզբ), Ստեփանոս Ռոշքայի անտիպ «Գանձ Հայոց Լեզուի» աշխատութիւնը եւն.:

Պողոսեանն իր գրքում նախ ուսումնական նպատակներով ներկայացնում է համառօտ նկարագրութիւնը միջնադարի ձեռագիր բառարանների, որոնք անչափ շատ են, եւ անբաժան հայ բանասիրութիւնից, ինչպէս օրինակ՝ «Բառք Յունարէն», «Բառք Եբրայեցւոց», «Բառք Քերթողականք», Արիստակէս Գրիչի ուղղագրական բառարանը, «Բառք Նարեկացւոյն», «Բառք Գաղիանոսի», «Հանդէս Բանաստեղծաց», որի ընդօրինակութիւններից մէկի հիման վրայ է Երեմիա Մեղրեցին կազմել եւ 1699ին տպագրել հայ տպագիր բացատրական առաջին բառարանը՝ *Բառգիրք Հայոց*ը: Ամէն դէպքում Պողոսեանը շեշտադրում է այն նորոյթը, որ պարունակում է այս կամ այն բառարանն ու աշխատութիւնը, օրինակ՝ «Բառք Քերթողականք»ը պարունակում է գրական յուշարձաններով չվկայուած բազմաթիւ նորայայտ բառեր, որ նորովի քննութեան կարիք ունեն, ինչպէս՝ *այենակ, թոռակուլ, երահրաւէր, ընդագրել, համանձունք, ճոխաճեմ* եւն.:

Իդէպ պէտք է ասել, որ մեծ «ոդիսական» ունենալուց յետոյ ի վերջոյ տպագրութեան բախտին է արժանացել մեծանուն բանասէր Նորայր Բիւզանդացու միջին հայերէնի անաւարտ բառարանը, որի ձեռագիրը պահւում է Շուէդիայի Գէօթեբորգ քաղաքի համալսարանական գրադարանի ձեռագրերի բաժնում: Բառարանն ամբողջացրել եւ հրատարակել է Մարտիրոս Մինասեանը: Միջին հայերէնի վերաբերեալ մէկ այլ բառարան՝ Եոզէֆ Կարստի *Միջին Հայերենի Բառարան*ը, տպագրութեան ընթացքի մէջ է ներկայումս: Այդ աշխատութեան ձեռագիր էջերը պահպանւում են Երեւանի Մաշտոցեան Մատենադարանում: Այն թուայնացրել եւ հրատարակելու որոշակի քայլեր է կատարել Գերմանիայի Հալլէ/Վիթենբերգի Համալսարանի գիտական խումբը: Այս ամէնի մասին նոյնպէս իմանում ենք Պողոսեանի՝ նկարագրուող աշխատութիւնից:

* * *

Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրերից Պողոսեանը քաղել եւ ներկայացրել է, ձեռագիր միքանի բառարաններ, որոնք այս կամ այն պատճառով դուրս են մնացել լեզուաբանների ուշադրութիւնից: Այդպիսի բառարան է պարունակում թ. 1528 ձեռագիրը (գրուած 1649-51ին, Նախիջեւանի Շոռոթ գիւղաքաղաքում), որի 1ա-2բ էջերին Նահապետ Ծաղկողը որպէս յաւելագրութիւն թողել է համառօտ մի բառարան: Այն ժամանակի խօսակցական տարբերակով բացատրում է գրաբարեան այնպիսի բառեր, որոնք իր ժամանակի հայերէնի գործածութիւնից դուրս եկած լինելով՝ կարող էին անհասկանալի լինել ձեռագրի հնարաւոր ընթերցողներին, ինչպէս՝ **մատակարար** - «մարանապետ, զոր մանկտաւագ ասեն», **մեղրապոպ** - «ձմերուկ», **նշանախէց** - «կէսգիր կամ կէտ», **տարացոյց** - «օրինակ», **տաւաղել** - «ժողովել» եւն.: Բազմաթիւ բառեր բացատրուած են բարբառային եւ օտար բառերով, ինչպէս՝ **դարանել** - բուսայ մտանել, **երեսանակ** - պախուց կամ

նշխարայ (արար. nokta, nukta, տասնկ.ից), թովիչ - ախտունչի, լեգէոն - գունդք կամ թօրուն են.: Այստեղ կրկին ի ցոյց են դրսում նորակազմ կամ նորայայտ բառերը, որ կարող են հարստացնել իր ժամանակի հայերէնի բառարաստաշարի ռասմնասիրութիւնը, ինչպէս՝ «ամբոխասնալ - գիմարել ի տուիանս կամ աշնուց», հասմշուհին - «ի մի քարաչէ», մարմաջել - «ախորժել», վրիժել - «տանջել» եւ.:

Շատ յաճախ մեծագրութեան մէջ կարող ենք տեսնել ձեռագրերից լուսապատճէն էջեր, որից մէկը Նահապատ Եաղկոզի բառարանից է:



Նկար 1. Հարուած Նահապետ Եաղկոզի բառարանից, էջ 1բ

Ուշագրաւ մէկ այլ բառարան է Մաշտոցեան Մատենադարանի թ. 1635 ձեռագրում պահպանուած *Տանգատուրեայ Բառգիրք Թուրքերէն-Հայերէն* (1778)։ Նրանում տրտում է թուրքերէն բառը հայերէն տառադարձութեամբ, ապա բացատրութիւնը՝ ողջ բառարանը ծայրեծայր լանգատրուած տողերով, որով բառարանը ստանում է բանաստեղծական-տաղաչափական արուեստ։ Տողերը հիմնականում 8 (չափ ոէպքերում նաեւ 7) վանկանի են։ Օրինակ՝

Նազիրմէկ միպէզ կամ ճառեզ,
Նազոշկայ պէրմէզ է ոչարեզ։
Նասէնէ, որ սեւեռեսէ խուրմէկ,
Նարն է նուռն բազմանուրմէկ։
Նարիրան է կէր, եթէ ինչ փոքրմէկ,
Նէրկիզն նոյնէ նարմէս ծարմէկ։
Նազիրն է նուրբ, գեղեցիկ եւ փոքրիկ,
Նէրկին՝ թաց, գիճ ւնսի չրաանէկ։

Բառայօդուածներում բանաստեղծութեան տողերով բացատրուած է մօտ 1700 բառ: Ուշադրութիւն են գրաւում շաղկապով կազմուած (բաղհիւսական) բարդութիւնները՝ դիրտ եւ մրուր, խուրձ ու փունջ, ծերպ եւ փապար, կից եւ կցակ, ղամբար եւ ջահ, ուռն եւ կռան եւն.: Բառարանում բառերը բացատրելու ոճ պէտք է դիտել նաեւ նուազական ածանցներով կազմուած բառերի առատութիւնը՝ ագուցիկ, անօսրիկ, ասպաստանիկ, բարձիկ, բուսիկ, հանքիկ, ձողակ, շնորհուկ եւն.:

Յաջորդիւ ներկայացուած են «Բառարան Բժշկական», «Ի Վերայ Այբուբէնից Անուանք Քաղաքաց», Վարդան Յունանեանի բառարանը, Յովսէփ Արցախեցու գրաբարի ուսումնական բառարանը, որոնց նկարագրութեան վրայ կանգ չենք առնում՝ ընթերցողին հնարաւորութիւն տալով անձամբ դա անելու: Նշենք միայն, որ «Բառարան Բժշկական»ում Պօղոսեանը մատնանշում է հոմանիշային շարքեր, որոնք գործածական են եղել ուշ միջնադարի հայերէն բնագրերում, օրինակ՝ «գինի» իմաստով գործածուած են բազմաթիւ համարժէք բառեր.-

Ամալիս, որ է խաղողի գինի
Ճամիուրի, որ խաղողի գինի
Միսդար, որ է պիղծ գինին, որ աւիրէ եւ շուտ հարբեցնէ զմարդն խիստ
Մուտամ, որ է գինի
Մուլ, որ է գինի
Ոլովինայ, որ է գարու գինի
Սէքի, որ է գինի վաղար, որ է գինի
Վարհիզ, որ է գինի
Տիլայ, որ է հին գինին
Տլայ, որ է գինի:

Ուշարժան է Ֆիրիկ բառայօդուածը, որ միջնադարի բանասղեղծի Ֆրիկ անուան հնչիւնական մի նոր տարբերակ է ներկայացնում: Ամիրդովլաթ Ամասիացու *Անգիտաց Անպէտն* ունի Ֆրիկ տարբերակը նոյն բացատրութեամբ:

Հեղինակն իր մենագրութեան մէջ հիմնականում նկարագրել է ուշ միջնադարի բառարանները, սակայն կարծում ենք աշխատանքը կը շահէր, եթէ առաւել մանրամասն ներկայացուէին բառերի՝ գրաբարի հետ ունեցած իմաստային կապերը, իմաստափոխութիւնները, որոնց միջոցով գոյանում էին մեր լեզուի փուլերը՝ գրաբարը, միջին հայերէնը, աշխարհաբարը:

Ուշ միջնադարի հայ բառարանագրութեանը նուիրուած սոյն մենագրութեանը նախորդել են Պօղոսեանի միքանի հրապարակումները հայագիտական հանդէսներում[3]: 2014ին Երեւանի Պետական Համալսարանը հրատարակեց նաեւ հեղինակի *Նորայայտ Բառեր Վաղաշխարհաբարեան Աղբիւրներում* բառարանը, որի մէջ հաւաքուած են 16-18րդ դարերի տպագիր ու ձեռագիր աղբիւրներից քաղուած բազմաթիւ

նորայայտ (հին հայերէնի բառարաններով չվկայուած) կամ իմաստափոխուած մօտ 3000 բառ[4]: Բոլոր բառերը բերուած են բնագրային վկայակոչում(ներ)ով, շատ դէպքերում բառայօդոածները համադրուած են հեղինակաւոր բառարանների տուեալների հետ, հնարաւորինս ներկայացուած են նաեւ ստուգաբանութիւնները:

Բոլոր այս հրապարկումները գալիս են մէկ անգամ եւս հաստատելու, որ միջնադարի հայ բառարանագրութեան ուսումնասիրութիւնը դեռ շատ անելիքներ ունի: Այդպիսի անելիքներին է նուիրուած Պօղոսեանի գրքի «Որպէս Ամփոփում» վերջաբանը, ուր նա առանձնացնում է իր կարծիքով հայ բառարանագիտութեան արդի խնդիրները, ինչպէս՝ ձեռագիր բառարանների քննական բնագրերի կազմումը, *Բառգիրք Հայոց*ի աղճատումների ճշգրտումները ձեռագրերի հիման վրայ, նոր աղբիւրների (դիւանական փաստաթղթեր, կոնդակներ, նամակներ եւն.) ներառումը բառապաշարային քննութիւնների մէջ, եւ, որպէս արդիւնք այս ամէնի, հայերէնի լիակատար բառարանի ստեղծումը: Վերջինը եթէ նոյնիսկ բարի ցանկութիւնների ոլորտից է առայժմ, սակայն եւ նման բառարանի կազմումը, որ կ'ամփոփի գրաբարի, միջին հայերէնի, բարբառների, արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի բոլոր տարբերակների բառերը, իրօք որ հայերէնագիտութեան համար դարակազմիկ արժէք կարող է ունենալ: Յոյս ունենանք, որ հեռու չէ այն օրը, որ գիտական կարող ուժերի միջոցով հնարաւոր կը լինի նման ծրագիր իրագործել:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Նորայր Պօղոսեան, *Հայ Բառանագրութեան Պատմութեան Դրուագներ, Պրակ Ա.*, Երեւան, Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Հրատ., 2016:

[2] Վազգէն Համբարձումեան, *Ակնարկներ Հայ Բառարանագրութեան Պատմութեան*, Երեւան, «Զանգակ-97» Հրատ., 2006:

[3] Ն. Պօղոսեան, «Նոր Բառեր Եւտիքոսի Բնագրում», *Բանբեր Երեւանի Համալսարանի*, Երեւան, 2008, թ. 3. նաեւ՝ «17-րդ Դարի Հայ Բառարանագրութեան Յուշարձաններ», *Ջահուկեանական Ընթերցումներ: Հանրապ. Գիտ. Նստաշրջանի Զեկուցումներ*, Երեւան, 2012, էջ 252-264. նաեւ՝ «Լատինաբան Հայերէնի Բառարանագրութեան Մի Յուշարձան ԺԷ. Դարից», *Բազմավէպ*, Վենետիկ, 2011, թ. 3-4, էջ 627-645:

[4] Նորայր Պօղոսեան, *Նորայայտ Բառեր Վաղաշխարհաբարեան Աղբիւրներում (16-18-րդ Դարեր)*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2014:

ԱՐՇԱԿ ՊՕՂՈՍԵԱՆ
arshakpo@mail.ru